ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

№_____ «___»_____ 2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 2/06

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 15.05.2020թ.

Ես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեղամ Շախբազյանս, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 730-Լ որոշման հավելվածի 20-րդ կետի 13-րդ ենթակետը՝

ՊԱՐԶԵՑԻ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի մարտի 13-ի հայտարարությամբ՝ կորոնավիրուսային հիվանդությունը (COVID 19) որակվել է որպես պանդեմիա, նկատի ունենալով աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) տարածման դեպքերը կանխելու անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ հաշվի առնելով վարակի տարածման սահմանների և դրանով վարակված անձանց թվի ավելացման պայմաններում համապատասխան

կանխարգելիչ աշխատանքների և միջոցառումների իրականացումը և դրանց արդյունքում անձանց կյանքի և առողջության պահպանումը՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 17.03.2020թ. N 1/06 որոշմամբ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հարուցված և չավարտված բոլոր վարչական վարույթները կասեցվել են:

Հիմք ընդունելով ՀՀ պարետի 2020 թվականի մայիսի 14-ի N 74 որոշումը՝

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հարուցված և չավարտված բոլոր վարչական վարույթները վերսկսել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

X _____ **ԳԵՂԱՄ ՇԱԽԲԱԶՅԱՆ**